

ՀՀ Արմավիրի մարզի Ակնաշեն համայնքի ղեկավարի 2014 թվականի տարեկան հաշվետվության

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Յ ՈՒ Ն

19.01.2015 թվականին կայացավ ՀՀ Արմավիրի մարզի Ակնաշեն համայնքի ղեկավարի 2014 թվականի տարեկան հաշվետվությունը:

Հաշվետվությանը ներկա էին ՀՀ Արմավիրի փոխմարզպետ Դավիթ Սամսոնյանը, Ակնաշեն համայնքի ավագանու անդամեր՝ Գագիկ Խուրշուդյանը, Աշոտ Գևորգյանը, Նորայր Բաղայանը, Ալվարո Վարդանյանը և Ակնաշեն համայնքի թվով 85 բնակիչներ: Ակնաշեն համայնքի ղեկավար Միսակ Միսակյանը հանգամանալից ներկայացրեց 2014 թվականի տարեկան հաշվետվությունը: Ակնաշեն համայնքի ավագանու անդամները իրենց շնորհակալությունը հայտնեցին Արմավիրի մարզպետ Աշոտ Դահրամանյանին և համայնքի ղեկավար Միսակ Միսակյանին համայնքում կատարած աշխատանքների համար:


Հաշվետու ժողովի մասնակիցները իրենց շնորհավորական ուղերձն հղեցին մարզպետ Պ-ն Ա.Դահրամանյանին 2014թվականի հաշվետու տարում Հանրապետությունում լավագույն մարզպետի մրցանակին արժանանալու համար:

Համայնքի Կ.Դեմիրճյան փողոցի բնակիչ Վաչիկ Բաղայանը հարց բարձրացրեց 2014 թվականի համար նախատեսված, բայց իրականում չկատարված իրենց փողոցի գազաֆիկացման աշխատանքների վերաբերյալ:

Համայնքի ղեկավար Միսակյանը պատասխանելով բնակչի հարցին ասաց, որ իրենք կրկնակի դիմել են պատկան մարմիններին, որ 2015 թվականի տնտեսական տարում կատարեն նշված փողոցի բնակիչների խնդրանքն:

Համայնքի բնակիչ Ալվարո Վարդանյանը իր և «Շորղարա» կոչվող հանդամասի 35 հեկտար հողատերերի անունից հարց բարձրացրեց ոռոգման ջրի մատակարարման հարցի կարգավորման մասին: Համայնքի ղեկավարը պատասխանեց, որ իրոք նշված հանդամասին համայնքին սպասարկող «Ակնալիճ» ՋՕԸ-ը սկզբնաղբյուր չլինելու պատճառով ոռոգման ջուր չի կարողանում մատակարարել, այս հարցի լուծման համար կրկին պետք է դիմեք մարզպետի օգնությանը:

Արձանագրությունը կազմեց Ակնաշեն համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար՝  Խ. Հովակիմյան

Ակնաշեն համայնքի ղեկավար՝  Մ. Միսակյան



Արմավիրի մարզի Ակնաշենի գյուղապետի 2014 թվականի տարեկան կատարված աշխատանքների վերաբերյալ

2015 թվականի հունվարի 19-ին ժամը 14-00 –ին տեղի ունեցավ Ակնաշենի գյուղապետի 2014թվականի տարեկան հաշվետու նիստը: Նիստին մասնակցում էին ավագանու անդամներ, համայնքի 85 /ութսունհինգ/ բնակիչներ և Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ՝ մարզպետի տեղակալ Դավիթ Սամսոնյանը:

Զեկուցող՝ գյուղապետ Միսակ Միսակյան.

2014թվականի տարեկան բյուջեով նախատեսված է վարչական բյուջեի եկամուտ՝ 31429,9 հազար դրամ, այդ թվում՝

1. Հողի հարկից 3800,0 /երեք միլիոն ութ հարյուր հազար դրամ/.
2. Գույքահարկից շինություն 1200,0 /մեկ միլիոն երկու հարյուր/ հազար դրամ.
3. Գույքահարկից փոխադրամիջոց 2500,0 /երկու միլիոն հինգ հարյուր/ հազար դրամ
4. Համայնքային սեփ. հողերի վարձակալություն 500,6 /հինգ հարյուր հազար վեց հարյուր/ դրամ
5. Տեղական տուրքեր՝ 195,0 /մեկ հարյուր իննսուն հինգ հազար յոթ հարյուր/ հազար դրամ.
6. Դոտացիա 23053,7 /քսաներեք միլիոն հիսուներեք հազար յոթ հարյուր/ հազար դրամ
7. Նպատակային հատկացումներ 28,2 /քսանութ հազար երկու հարյուր/ հազար դրամ

2014թվականի վարչական բյուջեի եկամուտների տարեկան պլանը փաստացի կազմում է՝

1. Դոտացիա պլանով 23052,7 հազար դրամ փաստացի 23053,7 հազար դրամ պլանը կատարվել է 100% -ով:
 2. Հողի հարկ պլանով 3800,0 հազար դրամ փաստացի 3315,2 պլանը կատարվել է 87,2%-ով:
 3. Գույքահարկ շինություն 1200,0 հհ դրամ հազար դրամ փաստացի 1115,6 պլանը կատարվել է 93%-ով
 4. Գույքահարկ փոխադրամիջոց 2500,0 հհ դրամ փաստացի 3192,4 պլանը կատարվել է 127%-ով
 5. Հողի վարձակալություն 500,6 հհ դրամ փաստացի 396,8 պլանը կատարվել է 78,5%-ով
 6. Տեղական տուրքեր՝ 195,0 հհ դրամ հազար դրամ փաստացի 160,0 պլանը կատարվել է 82,0%-ով
 7. Վարձավճար շին. կից տարածք 147,4 հհ դրամ փաստացի 168,5 պլանը կատարվել է 117,3%-ով
- Ընդամենը եկամուտներ 31429,9 հհ դրամ փաստացի 31450,2 պլանը կատարվել է 100,1%-ով

2014 թվականի տարեկան սեփական եկամուտների կատարողականը 2013թվականի համեմատության ավելացել է 916,0 հազար դրամով՝ այդ թվում

1. Հողի հարկը 2013թվականի համեմատությամբ ավելացել է՝ 69,0 հազար դրամով
2. Ընդհանուր գույքահարկի գծով 2013թվականի համեմատությամբ ավելացել է 768,0 հազար դրամ
3. Վարձավճարը համայնքային հողի հարկի նվազել է 2013թվականի համեմատությամբ 145,0 հազար դրամով պատճառը (2014թ. նշված հողերի մի մասն չեն վարձակալել)
4. Տեղական տուրք 2013թ. համեմատությամբ նվազել է 34,0 հազար դրամով
5. Շինությունը կից հողերի վարձավճարը 2013թվականի համեմատությամբ ավելացել է 168,5 հազար դրամով:

2014թվականի ընթացքում կատարվել են հետևյալ ծախսերը՝

ա/ Աշխատավարձ՝ 17018,4 հազար դրամ.

բ/ Ըներգետիկ ծառայություններ՝ 2399,9 հազար դրամ.

գ/ Կապի ծառայություններ՝ 340,0 հազար դրամ.

դ/ Տրանսպորտի վարձակալություն՝ 960,0 հազար դրամ.

ե/ Ներքին գործուղումներ՝ 115,0 հազար դրամ.

զ/ Համակարգչային ծառայությունների համար՝ 144,2 հազար դրամ.

է/ Տեղակատվական ծառայություններ՝ 139,9 հազար դրամ.

ը/ Ներկայացուցչական ծախսեր՝ 500,0 հազար դրամ, /դպրոցի շրջանավարտներին նվիրվել են նվերներ/

թ/ Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ՝ 997,0 հազար դրամ.

ժ/ Մասնագիտական ծառայություններ՝ 97,6 հազար դրամ.

ի/ Գրասենյակային նյութեր՝ 473,9 հազար դրամ.

լ/ Տրանսպորտային նյութեր՝ 200,0 հազար դրամ.

խ/ Այլ ծախսեր՝ 845,0 հազար դրամ.

ծ/ ճանապարհների ընթացիկ նորոգում 970,0 հազար դրամ.

կ/ ջրի պոմպերի ձեռք բերում՝ 345,0 հազար դրամ.

հ/ նախագծահետազոտական ծախսեր՝ 230,0 հազար դրամ.

ճ/ կոմունալ ծախսեր՝ 1200,0 հազար դրամ.

դ/ ջրամատակարարման ծախսեր՝ 1099,0 հազար դրամ.

ճ/ շենք-շինություն կապիտալ նորոգման ծախսեր 930,0 հազար դրամ.

մ/ փողոցների լուսավորություն՝ 300,0 հազար դրամ.

յ/ մշակութային միջոցառումներ 400,0 հազար դրամ.

/ մայիսի 9-ի հաղթանակի օր/

ն/ սոցիալական օգնություն՝ 1960,0 հազար դրամ. /անապահով ընտանիքներին/

2014 թվականի ընթացքում ստացվել է՝ 215, ուղարկվել է՝ 223 փաստաթուղթ:

Հրավիրվել և անցկացվել է ավագանու 12 նիստեր,

ա/ հերթական ---- 6 նիստ

բ/ արտահերթ ----6 նիստ

ընդունվել է ավագանու 50 որոշումներ, :

Ստացվել է 86 դիմումներ, որից պատասխան է տրվել 86 դիմումների:

Ընդունվել է ղեկավարի 48 որոշումներ և արձակվել է 20 կարգադրություններ:

Բնակիչներին տրամադրվել է 824 տարբեր բնույթի տեղեկանքներ:

Չնայած կատարված վերնշված աշխատանքներին համայնքում կան չլուծված խնդիրներ՝

Անհրաժեշտ է կատարել՝

1. Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում.

2. Կարեն Դեմիրճյան փողոցի բնակարանների գազաֆիկացում

3. Խմելու ջրագծերի նորոգում:

4. Ներտնտեսային ոռոգման ցանցի 450գ.ծ.մ. կիսախողովակների կառուցում, ոռոգման ջրի հարցի կարգավորման համար:

5. Կիսակառույց եկեղեցու վերակառուցում /մայր աթոռ սուրբ Էջմիածնի միջնորդությամբ/:

Ակնաշենի գյուղապետ՝

Աշխատակազմի քարտուղար՝



Մ.Միսակյան

Խ.Հովակիմյան